ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

5 հունիս, 2024 թվականի № 43-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի № 52-Լ որոշման հավելված 1-ով սահմանված «Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման» կարգի 8-րդ կետի 4-րդ ենթակետը, 15-րդ կետը, 16-րդ կետը և 17-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի մայիսի 3-ի N 35-Լ որոշմամբ հայտարարված մրցույթի արդյունքներով մասնակիցներից ոչ ոք չի ստացել մրցույթում հաղթող ճանաչվելու համար սահմանված անհրաժեշտ քանակի ձայներ՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար Հանրային հեռարձակողի խորհրդի 2024 թվականի մայիսի 3-ի N 35-Լ որոշմամբ հայտարարված մրցույթը համարել չկայացած:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

5 հունիս, 2024 թվականի
ք. Երևան